

քննությունը և լեզվական հարուստ փաստերի բացահայտումը կարող են օգնել մասնագետ բն-

ժանմունքի 1956 թ. № 11 Տեղեկագրում դե-տեղյաժ հոդվածում: Նա իրավացիորեն մատ-նանշում է պրոֆ. Գր. Ղափանցյանի մի շարք ստուգարանությունների կառկածելի լինելը, թեև այդ հարցում երբեմն ծայրահեղությու-նների մեջ է ընկնում:

Քննարկին՝ ճիշտ հասկանալու հայերենի և բնիկ այլ տեղանունների առնչակցությունները:

Ի վերջո պետք է ասել, որ պրոֆ. Գր. Ղա-փանցյանի «Պատմա-լեզվաբանական աշխա-տություններ»-ի ժողովածուն շատ կշահեր, եթե օժտվեր գիտական անհրաժեշտ ապարատով՝ առարկայական և ստուգաբանված բառերի ու մասնիկների ցանկերով:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

«Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ.», կազմեց Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, հատ. 1-ին, Երևան, 1951, 453 էջ, հատ. 2-րդ, Երևան, 1956, 684 էջ:

«Նյութեր հայ ժողովրդի պատմության» բնդհանուր սերիայով Հայկական ՍՍՌ Գի-տությունների ակադեմիայի հրատարակու-թյամբ լույս է տեսել Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ.» երկ-հատորանոց ծավալուն ժողովածուն՝ մի արժե-քավոր աշխատություն, որն արտացոլում է մեր ժողովրդի անցյալի պատմության կարևորա-գույն էտապները: Այդ տարեգրությունները, ինչպես սովոր է ինստիտուտի կողմից կցված առաջարկում, «սկսանալու և ժամանակակից անձնավորությունների կողմից են կազմված, որոնք մեծ շահով լրացնում են հատկապես 14—16-րդ դարերի հայ ժողովրդի պատմության թիչ լուսաբանված էջերը» (հատ. 1-ին, էջ 5):

Գտնվելով Արևելքի և Արևմուտքի բարավա-նային ճանապարհների հանգուցակետում, Հա-յաստանը դարեր շարունակ թատերաբեմ է հանդիսացել օտար նվաճողների համար: Նր-կիր սխտեմատիկ ասպատակությունների ու ավերումների է ենթարկվել հոների, պարսիկ-ների, հոմեացիների, արաբների, բյուզանդա-ցիների, սելջուկների, մոնղոլների և, վերջա-պես, օսմանյան թուրքերի կողմից: Մեկը մյուսին հաջորդող այդ նվաճողները կործանե-ցին հայոց հինավուրց քաղաքներն ու գյուղե-րը, ոչնչացրին ժողովրդի զգալի մասը:

Այսպիսով, Հայաստանը մասնատվեց և բա-ժանվեց իր հարևան հզոր տերությունների միջև: 14-րդ դարից սկիզբ առան հայ ժողո-վրդի պատմության ամենադաժան ու մռայլ այն ժամանակները, որոնց ընթացքում կոր-ծանվեցին հայ ժողովրդի մշակույթի հիմնա-կան օջախները: Օտար նվաճողների ճիրանե-րում տառապող հայ ժողովուրդը, զրկվելով իր զարգացման հնարավորությունից, սկսեց ան-

կում ապրել: Այդ շրջանում մենք այլևս չու-նենք այնպիսի հայ պատմիչներ ու մատենա-գիրներ, ինչպիսիք ունեինք 5—13-րդ դարերում: Հեթում Պատմիչը տասներեքերորդ դարի վեր-ջին աչքի ընկնող հեղինակներից մեկն էր, որն իր «Պատմություն թաթարաց» գրքով հանդես եկավ օտար աշխարհում և հենց նրանով էլ ավարտվում է միջնադարյան հայ պատմագի-րների փայլուն համաստեղության շարքը:

Նվաճա, ժամանակագիրներն ու տարեգի-րներն են, որ մասամբ լրացնում են հայ պատ-միչներին:

Իրավացի է բնկ. Վ. Հակոբյանը, երբ գրում է.

«Պատմագրության մի տեսակն է ժամանա-կագրությունը, տարեգրությունը, որոնք նույն-բան հին են, ինչպես և պատմիչների աշխա-տությունները: Ժամանակագրությունը, ինչպես նաև տարեգրությունը, պատմական առանձին էությունները հաջորդաբար շարադրելու մի ձևն է, առանց կապակցության, քննության և նյութի ամբողջականացնելու գիտավորության» (հատ. 1-ին, էջ 9):

Ժողովածուն կազմողը, բրանաջան աշխա-տանքի շնորհիվ, կարողացել է ի մի բերել և ամբողջականացնել այդ ժամանակագրությու-նները և կազմել մի սովոր ժողովածու, որը խոշոր նշանակություն ունի ոչ միայն հայագի-տության, կովկասագիտության, այլև Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի, Հարավային Ռուսաստանի և Ուկրաինայի ժողովուրդների պատմության համար: Այդ ժողովածուն առանձնապես կարևոր է հայ ժողովրդի տա-րեգրության պատմության ուսումնասիրման և կիրիկիայի հայոց պետականության կազմա-վորման հարցերի լուսաբանման համար:

ժամանակագրությունների մեջ կան այնպիսի նյութեր, որոնք ցույց են տալիս աշխատավորական զանգվածների պայքարը հայ ֆեոդալների՝ խաբեբա ու խարդախ կրոնավորների, դաժան ու անողորմ իշխանների դեմ:

«Ժամանակագրություններ»-ը հետաքրքիր նյութեր են պարունակում 13—18-րդ դարերի քաղաքական անցուղաբերի, Հայաստանում և նրա հարևան երկրներում տեղի ունեցած ավերիչ պատերազմների, հայ ժողովրդի կրած տառապանքների, ճնշումների ու խոշտանգումների մասին: Ոգտագործված վաստակավորում կարևոր տեղեկություններ կան Հայաստանի և Կովկասի երկրների կուլտուր-կենցաղային, սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների, սոցիալական շարժումների, գաղափարական հերձուխի, գաղափարների և նրանց դավանաբանական կոիլների պատմության մասին:

«Ժամանակագրություններ»-ը առանձնապես կարևոր են հայ-բյուզանդական, հայ-սելջուկյան, հայ-պարսկական, հայ-մոնղոլական և հայ-թուրքական հարաբերությունների քաղաքական պատմության լուսաբանման տեսակետից:

Աշխատության երկու հատորներում բերված են 85 մեծ ու փոքր ժամանակագրությունների բնագրեր, որոնցից 38-ը լույս են տեսնում առաջին անգամ:

«Ժամանակագրություններ»-ի կազմողը յուրաքանչյուր հատորին կցել է առաջաբան, որին հաջորդում են բնագրերը: Յուրաքանչյուր ժամանակագրությանը կցված է ներածություն, ձեռագրական տարբեր օրինակների տարբերակներ՝ տարբերակների մանրամասն նշումներով և ընդարձակ ծանոթագրություններով: Վ. Հակոբյանի կատարած աշխատանքի կարևորությունն այն է, որ նա յուրաքանչյուր բնագրի ժամանակագրության ներածականի մեջ տալիս է մանրամասն տեղեկություններ, բնութագրում տվյալ բնագրի գիտական արժեքը, ինչպես նաև նրա պատմա-բանասիրական նշանակությունը:

«Ժամանակագրություններ»-ին կցված են բանություններն ու ծանոթագրությունները հասկանալի գնահատելի են նրանով, որ Վ. Հակոբյանը, գիտական խոր վերլուծության ենթարկելով հայ ժողովրդի պատմության այս կամ այն խճճված ու անհասկանալի հարցը, օգտագործում է երևանի Մատենադարանում պահվող գերազանցապես հնագույնագրված հարուստ հիշատակարաններն ու արխիվային արժեքավոր նյութերը:

«Ժամանակագրություններ»-ի հեղինակը ժողովածուն կազմելիս քրտնաջան ու համառ աշ-

խատանք է կատարել: Նա բարեխղճությամբ հավաքել և հետազոտել է ոչ միայն Երևանի Մատենադարանի հայերեն լեզվով ժամանակագրություններն ու տարեգրությունները, այլև որոնումներ է կատարել Սովետական Միության զանազան քաղաքներում:

Մոսկվայի Լենինի անվան Պետական հանրային գրադարանի, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան Պետական հանրային գրադարանի, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտական ինստիտուտի, ինչպես նաև Բարվի, Թբիլիսիի և Էջմիածնի կենտրոնական գրադարանների հայկական ձեռագրերի արխիվներում հեղինակը ջանասիրությամբ ուսումնասիրել է պահպանված ձեռագրերը, հավաքել և ի մի է բերել գոյություն ունեցող բոլոր հայերեն ժամանակագրություններն ու տարեգրությունները և դրանք հրապարակել իր ժողովածուի մեջ:

Վ. Հակոբյանը կարողացել է ճշտել այս կամ այն ժամանակագրության ու տարեգրության հեղինակի հարցը և միաժամանակ հանգամանորեն պարզել, թե տվյալ բնագրի հեղինակը ինչ աղբյուրներից է օգտվել: Իր պատողությունները հաստատելու համար նա բերում է բազմաթիվ հրապարակված ու անտիպ հիշատակություններ:

Ամենազգուշացն ու տրանսպարենտ աշխատանքը, որ կատարել է հեղինակը, դժվար ընթացիկի չհրապարակված ձեռագրական բնագրերի հանջող վերծանումն է:

Վ. Հակոբյանը չբավարարվելով լույս բնագրերի հրապարակումով, կազմել է նաև տպված և անտիպ ժամանակագրությունների ու տարեգրությունների գիտա-համեմատական տեքստեր:

Առանձին բնագրերի առնչությամբ ոչ միայն բերված են բազմաթիվ ձեռագրերի տարբերակները (տե՛ս հատ. 1-ին, էջ 143—149), այլև առանձին գուգահեռ տեքստեր, որոնք լրացնում և պարզաբանում են այս կամ այն բնագիրը: Այդ բոլորի հետ միասին հայտաբերած ամեն մի բնագիր ենթարկել է բանասիրական ու պատմագիտական հետազոտության: Հատորների վերջում կցված են՝ օգտագործված ձեռագրերի համառոտ բիրիդգրաֆիա, օտար բառերի բացատրան, աշխարհագրական, տարակալական և անձնանունների ցանկեր, որոնք հեշտացնում են այդ ժամանակում հատորների օգտագործումը:

«Ժամանակագրություններ»-ում առաջին անգամ հրապարակվող բնագրերից են՝ Հովհաննես Ավագերիցի ժամանակագրությունը (13-րդ դ.), Հեթում Պատմիչի «Պատմություն խորհրդանշան» (13-րդ դ.), Դավիթ Մերդրիցյու ժամանակա-

գրությունը (15-րդ դ.) և այլն: Առավել լրիվ և լիակատար տարբերակներով հրապարակված բնագրերից կարելի է նշել Անանուն Սերաստացու (13-րդ դ.), Հովհաննես Ծարեցու (16-րդ դ.), Գավիթ Բաղիշեցու (17-րդ դ.) ժամանակագրությունները:

Այս արժեքավոր նյութերը նոր լույս են սրբուում 14—15-րդ դարերի հայ ժողովրդի պատմության վրա: «Ժամանակագրություններ»-ում արժեքավոր տեղեկություններ են բերված ոչ միայն բաղադրական իրադրությունների, այլև կենցաղի, տնտեսական կյանքի վերաբերյալ, որոնք նպաստում են ուսումնասիրելու հայ տնտեսական մտքի պատմության մի շարք հարցեր:

«Ժամանակագրություններ»-ի երկրորդ հատորն ավելի ծավալուն է և հարուստ: Այստեղ ղեկավարված են 58 բնագրեր, որոնցից 33-ը հրապարակվում են առաջին անգամ:

Երկրորդ հատորի վերջում, որպես հավելված, հրապարակված է Հակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքին» արժեքավոր աշխատությունը, որը հայտնի է «Տեղագիր վերին Հայոց» վերնագրով՝ Կ. Կոստանյանցի հրատարակությամբ: Կոստանյանցը, սակայն, ճիշտ չէր բնութագրել հեղինակին և տերտորիան էր հրապարակել: Վ. Հակոբյանը չորս ձեռագիր և մեկ տպագիր օրինակների համեմատությամբ բնութագրել է հանձնում ուղ արժեքավոր հուշարձանի գիտա-համեմատական տերտորիան: Վ. Հակոբյանը ճշտում է մի քանի ժամանակագրությունների հեղինակության հարցը: Այսպես, օրինակ, մինչև հիմա գոյություն ուներ այն կարծիքը, թե Ստեփանոս Եպիսկոպոսի տարեգրությունը (13-րդ դ.) պատկանում է 13-րդ դարի հայ պատմիչ Սյունյաց միտրոպոլիտ-արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբելլյանին: Այդ հարցի շուրջը բանավեճի մեջ ժամանակով մի շարք հայագետների հետ (Ն. Ակիբյան, Յ. Քոսյան, Գ. Հովսեփյան, Ա. Արքահամյան և ուրիշներ), Վ. Հակոբյանը հանդուս է այն ճիշտ կերպացության, որ այդ տարեգրության հեղինակը ոչ թե Ստեփանոս Օրբելլյանն է, այլ նույն դարում ապրող Ստեփանոս Նորավանից Եպիսկոպոսը (մեռել է 1307 թ.):

Վ. Հակոբյանի հետ համաձայն է նաև պրոֆ. Լ. Մելիքեթեոս-Բեկը, որը գրում է. «Մեր ունեցած և վերաբերմունքը, այս իմպրի նկատմամբ, մի ժամանակ լուծում էինք հօգուտ Ստ. Օրբելլյանի... բայց հետո «Ժամանակագրության» տերտորիայի տեսնելուն պես փոխեցինք հօգուտ այլ Ստեփանոս Եպիսկոպոսի» (Հայկական ՍՍԽ Գիտ. ակադ. «Տեղեկագիր», 1952, № 2, էջ 112): Իմիջիայուց, այդ հարցի մասին բնկ. բնկ. Լ. Խաչիկյանը ու Վ. Հա-

կոբյանը դեռ «Ժամանակագրություններ»-ի տպագրությունից առաջ հրապարակել էին մի հետաքրքրական հոդված (տե՛ս Հայկական ՍՍԽ Գիտ. «Տեղեկագիր», 1949, № 2-ում. «Ինչպես չպետք է հրապարակեն պատմական սկզբնագրություններ» հոդվածը):

Նույնը կարելի է ասել Հեթում Պատմիչի անունով հրապարակված մի ժամանակագրության մասին, որը, իբրև հավելված, տպագրել է Մկրտիչ Ավդեբյանը, Վենետիկում, 1842 թվականին «Պատմություն թաթարաց» գրքի վերջում:

Վ. Հակոբյանը, օգտագործելով Երևանի Մատենադարանի չհրապարակված բազմաթիվ հիշատակարաններ, հայերեն և օտար լեզուներով բազմաթիվ մատենագիրների վկայություններ, ինչպես նաև վիմական արձանագրությունների տվյալներ, համոզեցուցիչ կերպով ապացուցում է, որ «Համառոտ պատմություն ժամանակաց» տարեգրությունը, որն իր մեջ պարունակում է երկու հարյուր երեսուն մեկ տարվա անցուկարձերի պատմություն (1076—1307) պատկանում է ոչ թե Հեթում Պատմիչի, այլ Կիլիկիայի հայոց Հեթում Բ. Թաղավորի (իշխել է 1270—1288 թթ.) գրչին:

Վ. Հակոբյանը այդ ժամանակագրությունը հրապարակել է հենց «Հեթում Բ»-ի տարեգրությունը խորագրով (առաջին հատոր, 65—101 էջեր):

Առանձին բնագրերին կցված ընդարձակ ներածություններն ու ծանոթագրությունները բանասիրական ամբողջական հետազոտություններ են հանդիսանում: Այդպիսիք են, օրինակ, Հեթում Պատմիչի, Գավիթ Բաղիշեցու բնագրերին կցված ներածականներն ու ծանոթագրությունները: Անանուն Սերաստացու տարեգրության մեջ գրված է՝ «Ի թվին 317 (885) թագաւորեաց Լէւոն Բագրատունի» (հատ. 2-րդ, էջ 129): Վ. Հակոբյանը, Աշոտ Բագրատունու թագավոր հռչակվելու տարեթիվը ճշտելու համար (որ, ըստ նրա 884 թ. օգոստոսի 26-ն է), բանավեճի է բռնում Չամչյանի, Օրմանյանի, Դյուրյանի, Լեւոյի և ուրիշների հետ՝ տալով ավելի քան կես մամուլ կազմող 45-րդ ծանոթագրությունը: Նույնը կարելի է ասել 279 էջի 64-րդ, 223 էջի 15-րդ ծանոթագրությունների մասին: Ըստ էության դրանք ոչ թե «Ծանոթագրություններ» են, այլ գիտական հետազոտություններ, որոնք պարզություն են մտցնում հայ ժողովրդի պատմության այս կամ այն հարցի լուսաբանման գործում:

Մանր ժամանակագրություններ»-ի մեջ տեղ են գտել մի շարք շափածո բնագրեր, որոնք պատմա-բանասիրական բնույթ ունեն և մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Վ. Հակոբյանը «Ժամանակագրություններ»-ի հրապարակման գործում ցուցաբերել է գիտական բարեխղճություն, ձևաչափայնություն և գործին տիրապետելու կարողություն:

Ինչպես վերը նշվեց, «Ժամանակագրություններ»-ի թե՛ առաջին, և թե՛ երկրորդ հատորներում հրապարակված են 13—18-րդ դարերի ժամանակագրություններն ու տարեգրությունները, որպիսի հանգամանքը, մեր կարծիքով, որոշ գծավարություն է ստեղծում ուսումնասիրողների համար: Թվում է, թե աշխատանքը կշահեր, եթե 13—16-րդ դարերի ժամանակագրությունները ընդգրկվեին առաջին հատորում, իսկ 17—18-րդ դարերի ժամանակագրությունները՝ երկրորդ հատորում:

Ժամանակագրական կարգը խախտվելու հետևանքով ընդգրկվող ներածականներում և ծանոթագրություններում ստեղծվել են որոշ կրկնություններ: Այսպես, օրինակ, Հեթում Պատմիչի մասին հանգամանքներն խոսվում է թե՛ առաջին հատորում, (էջ 65—74) և թե՛ երկրորդ հատորում (էջ 33—36, 94—100): Նույնը կարելի է ասել ներսես Պալինյացու և մի քանի այլ ժամանակագրությունների մասին:

«Ժամանակագրություններ»-ի հատորներին կցված անձնանունների, տեղանունների և առարկայական ցանկերը, օտար բառերի բացատրանքները ընդհանուր առմամբ հաջող են կազմված և մեծապես նպաստում են հրապարակված բնագրերի օգտագործմանը, սակայն աշխատության մեջ տեղ են գտել առանձին սխալ բացատրություններ ու մեկնաբանություններ:

Այսպես օրինակ, «Իլդար» թուրքերեն բառը, որը նշանակում է «արագընթաց» տպագրված է «Ի լդար»․ ալթինթը «ի»-ն դարձել է նախդիր և բառի նշանակությունն աղավաղվել է (հատ. 2-րդ, էջ 228, տող 29, էջ 229, տող 10, էջ 231, տող 27):

Վ. Հակոբյանը հրապարակում է ձևագրի մի հիշատակարան, որի հեղինակն իր կարծիքով Հովհաննես Սեբաստացին է (հատ. 2-րդ, էջ 254): Մատենադարանի նույն ձևագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ ձևագրի հիշատակարանը ոչ թե Հովհաննես Սեբաստացուն է, այլ՝ Հովհաննես Անթաթիցուն: Վ. Հակոբյանը այդ ձևագրից օգտվելիս չի նկատել, որ հիշատակարանի հեղինակը վերջում ինքն իր մասին գրում է. «Արդ՝ զի՛նչ երկարեցից յազգի յազգի տառապանացս, որ ունի ի դարկարութիւնս իմ, որպէս և դուր քաջ գիտէ զյանցդ յանցից դարկալին: Անմեղադիր լիւրս յեղբարք անպիտան Յովհաննէս գրչի,

Երկրաւ և դաւառաւ, որ եմ յինթրփցիս և մեղաւր ի լի ի մէջ աշխարհի» (տե՛ս ձևագիր № 1868, էջ 234ա):

Ուրեմն, հիշատակարանի հեղինակը իրոք Հովհաննես Անթաթիցին է:

«Ժամանակագրություններ»-ի երկրորդ հատորում Հակոբ Հիսուսիին վերագրված ժամանակագրության մեջ Վ. Հակոբյանը «Երազատուն» բառը վերծանել է «Եր աղատուն» (տե՛ս հատ. 2-րդ, էջ 195) ձևով, որ սխալ է:

«Երազատուն», «Երազ» նշանակում է «Երար»։ Ձևագրում կարգում ենք. «Երպայ սօլթանն փախաւ դիմաց Երազատանն» (տե՛ս ձևագիր № 7841, էջ 317բ), «Լաթիւ բեկն գնաց զիպայ սօլթանն սպանեց Երազատանն»:

Անհրաժեշտ է պատճառով Վ. Հակոբյանը «Ժամանակագրություններ»-ի թե՛ առաջին, և թե՛ երկրորդ հատորներում խուսափել է կրոնական բովանդակություն ունեցող նյութերը հրապարակելուց: Այդ մասին նա գրում է. «Զուտ կաթողիկոսներին վերաբերող ժամանակագրական նյութերը չեն մտնում սույն ժողովածուի մեջ» (հատ. 1-ին, էջ 13): Մի ուրիշ անգամ Հեթում Պատմիչի ժամանակագրության կապակցությամբ կարգում ենք «...բնագիրը հետաքրքրության առարկա կարող է դառնալ մասնագետների համար, նպատակահարմար դասեր հրապարակել համարյա ամբողջական ձևով, դուրս թողնելով Հոռի պապերի երկար շարանի մեծ մասը (մինչև 1185 թ.), որոնք ոչինչ տալ չեն կարող ընթերցողին ու հետազոտողին և ոչինչ չեն կարող ավելացնել այդ մասին եղած, բազմիցս անգամ ստեղծված ու հրապարակված գրականության վրա, կամ թե որոշ սրբագրություններ մտցնել նրա մեջ: Դուրս ենք թողնել (սկզբի էջերից) նաև մի շարք «փաստեր», բաղված ավետարանից, կամ վաղ բրիտանական շարքի հորինված ավանդություններից, որոնք որեւէ դիտական արժեք չեն ներկայացնում» (տե՛ս հատ. 2-րդ, էջ 36):

Մենք չենք առարկում այն բանի դեմ, որ հեղինակը բացարձակապես կրոնական բովանդակությամբ առանձին տարեգրություններ անհրաժեշտ չի գտել հրապարակել, բայց նա ճիշտ չի վարվել, երբ առանձին հեղինակների ժամանակագրությունները հրապարակելիս կրճատումներ է կատարել բնագրի մեջ ելնելով այն բանից, որ նրանք կրոնական բովանդակություն ունեն: Մեր կարծիքով, բնագիրը անհրաժեշտ է հրապարակել այնպես, ինչպես գրված է եղել ավելի հեղինակի կողմից՝ հնարավորություն բնթողնելով չուրաբանչյուր հետազոտողի այդ փաստաթղթից օգտվել սեփական հայեցողությամբ:

Հեթում Պատմիչն իր ժամանակագրության մեջ հաճախ շփոթում է «Ֆրանկ»-ը «Ֆրանս» կամ «Ֆրանսիա» տերմինների հետ: Այսպես, օրինակ, նա գրում է. «Եւ (530) Կլաւդար թագաւոր Ֆրանսին վախճանեցաւ» (հատ. 2-րդ, էջ 47). «Ո՛հ (651) զԹեաւաւրիկ թագաւորն Ֆրանսին հանին ի թագաւորութենէ» (հատ. 2-րդ, էջ 49) և այլն:

Որոշ հեղինակների կողմից «Ֆրանս» կամ «Ֆրանսիա» բառերի նման գործածությունը թյուրիմացության մեջ է ձգել Վ. Հակոբյանին, որը 6-րդ դարի իրողությունների մասին խոսելիս, գործ է ածում ոչ թե «Ֆրանկ» այլ «Ֆրանսիա» տերմինը: Օրինակ, նա գրում է. «Խոսքը հավանաբար վերաբերում է ֆրանսիական թագավոր Խլոտար 1-ին (516—566)» (հատ. 2-րդ, էջ 82) կամ «Ֆրանսիական պատմության Մերովինգների և Կարոլինգների շրջանին...» (հատ. 2-րդ, էջ 33): Հայտնի է սակայն, որ ոչ միայն Մերովինգների տիրա-

պետության շրջանում, այլև Կարոլինգների ժամանակ «Ֆրանսիա», «Ֆրանսիացի» տերմինները չէին գործածվում և եվրոպացիներին, որոնց թվում նաև ֆրանսիացիներին ու գերմանացիներին, «Ֆրանկ» էին անվանում:

Սեր այս մասնակի դիտողությունները չեն նսեմացնում գրախոսվող ժողովածուի արժանիքները: Միանգամայն գնահատելի է այն ծանր ու արնաջան աշխատանքը, որ կատարել է Վ. Հակոբյանը իր երկարամյա պրպոտմների ընթացքում: Անհրաժեշտ է նշել, որ Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը շնորհակալ աշխատանք է կատարել, լույս ընծայելով Պատմության ինստիտուտի աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանի՝ «Մանր ժամանակագրություններ» ծավալուն ժողովածուն:

Ա. ԳԱԼՍՅԱՆ

С. С. АРЕВШАТЯН, *Философские взгляды Григора Татеваци*. Академия наук Армянской ССР, Сектор философии. Издательство АН Армянской ССР, Ереван, 1957, 180 стр. Ответственный редактор Л. С. Хачикян.

История армянской философской мысли является молодой отраслью в арменоведении. Разработка ее началась сравнительно недавно, однако в этой области уже сейчас имеются ощутимые результаты, говорящие не только о правомерности (это теперь ни у кого не вызывает сомнения), но и о необходимости еще большей интенсификации и расширения работ по изучению богатейшего философского наследия армянского народа. Как показывают первые исследования, Армения обладает древней и самобытной философской культурой, имеющей свою многовековую литературу, свои специфические особенности и традиции. В Государственном хранилище древних рукописей АрмССР (Матенадаране) хранится огромное количество философских манускриптов, содержащих оригинальные труды армянских мыслителей, а также переводную философскую литературу. Исследование и раскрытие этого богатого насле-

дия, создание монографий об отдельных ее представителях, а затем об отдельных этапах ее развития — это единственно правильный путь к созданию в будущем целостной истории армянской философии.

С этой точки зрения большой интерес представляет недавно изданное Сектором философии АН АрмССР монографическое исследование кандидата философских наук С. С. Аревшатына «Философские взгляды Григора Татеваци».

До настоящей работы С. Аревшатына не только о философских взглядах, но вообще о мировоззрении Г. Татеваци, этого крупнейшего мыслителя средневековой Армении, не было специальных исследований. Имевшиеся отдельные высказывания, маленькие статьи, посвященные частным вопросам его взглядов, не только не раскрывали всего многообразия философских воззрений Татеваци, но и не давали полного представления о его мировоззрении. В ре-